

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Մարգարյանի ներդրումը Ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ



Մի րելի ուսանողներ,

Ջերմորեն շնորհավորում եմ Ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ: Կրթված քաղաքացին և հասարակությունը յուրաքանչյուր պետության շարժիչ ուժն է: Այսօր ուսանողությունն իրակտիվ մասնակցությունն ուղերևունի մեր պետության հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Անհերքելի փաստ է, որ հզոր և հաջողակ է այն պետությունը, որը հարուստ է հմուտ մասնագետներով, իր պետության հզորացման և առաջընթացի երաշխիքը հանդիսացող գրագետերի տասարդության: Մեր դարաշրջանի համաշխարհային մարտահրավերները պահանջում են սուր և գիտակյան միտք: Ես համոզված եմ, որ մեր հայ ուսանողներն օժտված են այս հատկանիշներով, որոնք հարկավոր են միջազգային ասպարեզում մեր պետությունը լավագույնս ներկայացնելու համար: Մի րելի ուսանողներ, կրկին շնորհավորելով Ուսանողության միջազգային օրվա առթիվ, ցանկանում եմ, որ պեսոզի դուք չդադարեք կատարելագործվել և ստանալ նոր գիտելիքներ, մաթոնում եմ ձեզ բազում հաջողություններ և ձեռքբերումներ ուսման մեջ, որոնք այնքան կարևոր են մեր պետության կայուն և խաղաղ ապագայի կերտման գործում: